ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/75

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Բողոք բերող՝ «Լեդս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լեդս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Եսայանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ավտոկայանատեղերում կայանման ավտոմատացման և կառավարման սմարթ համակարգերի տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Լեդս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 28.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- դադարեցնել 18.04.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,
- կատարել 24.03.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 22.04.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 26.04.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/7405-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 28.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

28.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/75 համարի ծածկագիրը:

04.05.2022թ.-ին և 13.05.2022թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.05.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.05.2022թ.-ին:

2. «Լեդս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեդս» ՍՊԸ-ն 28.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84: Բողոքարկվող գնման ընթացակարգի առարկան՝ «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ ավտոկայանատեղերում կայանման ավտոմատացման և կառավարման «սմարթ» համակարգերի տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգ:

1. «ԵՊՀ» հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) 17.03.2022թ տարածել է գնանշման մասին հայտարարություն, որով հայտնվել է հետևյալը.

1.1. Սույն ընթացակարգի (այսուհետ՝ Մրցույթ) արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ԵՊՀ ավտոկայանատեղերում կայանման ավտոմատացման և կառավարման սմարթ համակարգերի տեղադրման և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

1.2. Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընթացակարգի հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը ժամը 10:00-ը: Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7 -րդ օրվա ժամը 10:00 -ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, 2022 թվականի մարտի 24-ին ժամը 10:00-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն մրցույթի հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

2. Մրցույթին մասնակցել են մի շարք ընկերություններ, այդ թվում «ԼԵԴՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Դիմումատու):

3. Մրցույթի 1 և 2 չափաբաժինների հաղթող է ճանաչվել Դիմումատուն (հիմք թիվ 2 արձանագրությունը), ինչի արդյունքում 2022թ մարտի 31-ին Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով Դիմումատուին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և

պայմանագրի նախագիծ, որն իր հերթին ընդունվել է Դիմումատուի կողմից սահմանված ժամկետում:

4. Դիմումատուն պայմանագիրը ներկայացրել է նաև Պատվիրատուին 08.04.2022թ, որը հավաստվում է կից ներկայացվող գրությամբ:

4. 18.04.2022թ Գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ նշվել է հետևյալը. «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից՝ «Լեդս» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտք չի եղել ընտրված մասնակցի կողմից ներկայացվող կից գրությունը, հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագիրը կնքելու համար պահանջվող փաստաթղթերը: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և սույն հրավերի 8.20 կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերությունը «Լեդս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, ինպես նաև վերջինիս տվյալները գրավոր ներկայացնել լիազոր մարմնին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ համաձայն 2022 թվականի հունվարի 12-ի որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, ինչպես նաև հայտարարվել է ընտրված մասնակցի անունը.»:

Գնումների մասին ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) հիմնվում է հետևյալ կարևորագույն սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: (Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Օրենսդրի կողմից գնումների գործընթացը թափանցիկ, ոչ խտրական, մրցակցային կազմակերպելը սահմանվել է ապահովելու ազատ, առողջ մրցակցային դաշտ ստեղծելու համար:

Քննարկվող դեպքում հայտարարված մրցույթին մասնակցել են մի քանի ընկերություններ, որոնք ունեն հավասար իրավունքներ: Գնահատող հանձնաժողովն իր հերթին պարտավոր է ապահովել բոլոր մասնակիցների՝ գնման գործընթացին անխոչընդոտ, հավասար մասնակցությունը:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովի վարքագիծը փոքր ինչ տարօրինակ է այն տրամաբանությունից ելնելով, որ փաստացի Դիմումատուն որևէ խախտում թույլ չի տվել, ինչը հավաստվում է վկայակոչված փաստերով:

Այլ կերպ ասած, անհասկանալի է ինչ իրավական և փաստական հիմնավորումներով է առաջնորդվել Պատվիրատուն՝ կայացնելով թիվ 3 արձանագրությունը:

Քննարկվող դեպքում Պատվիրատուն նշում է, որ ««Լեդս» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտք չի եղել ընտրված մասնակցի կողմից ներկայացվող կից գրությունը, հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագիրը կնքելու համար պահանջվող փաստաթղթերը», մինչդեռ եթե Դիմումատուն չի ներկայացել որոշակի փաստաթղթեր և փաստացի չի բավարարել հայտի պահանջները, ապա ինչո՞ւ է Պատվիրատուի կողմից ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկ և նախագիծ: Մյուս կողմից, կից ներկայացված գրությամբ փաստվում է, որ Դիմումատուն սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է նաև իր կողմից ստորագրված պայմանագիրը և անհրաժեշտ փաստաթղթերը, հետևաբար Դիմումատուն որևէ խախտում թույլ չի տվել:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- դադարեցնել 18.04.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,
- կատարել 24.03.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումները:

«Լեդս» ՍՊԸ-ն 06.05.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«04.05.2022թ տեղի ունեցած նիստի ժամանակ Դիմումատու «ԼԵԴՍ» ՍՊԸ ներկայացուցիչը հայտարարել է, որ ցանկանում է հստակեցնել բողոքի երկրորդ պահանջը:

Սույնով խնդրում ենք ներկայացված բողոքի 2-րդ պահանջը համարել հետևյալը. «Պարտավորեցնել թիվ ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել 24.03.2022թ թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները, այն է՝ «ԼԵԴՍ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր 1 և 2 չափաբաժինների մասով»:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով բողոք քննող անձի հարցադրումը Պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ ԵՊՀ պրոռեկտորին ներկայացնելու վերաբերյալ, ցանկանում ենք պարզաբանել, որ Դիմումատուի մոտ ձևավերվել է համոզմունք, որ գնման առարկայի և, առհասարակ, գնման ողջ գործընթացի հանդեպ վերահսկողություն իրականացնում է ԵՊՀ պրոռեկտորը, քանի որ վերջինս Դիմումատուին հրավիրել էր քննարկման և զրույցի, երբ Դիմումատուն հաղթող էր ճանաչվել: Զրույցի ընթացքում Դիմումատուին հայտնել է՝ ինչպես է Պատվիրատուն պատկերացնում աշխատանքները և ինչ արդյունք են ակնկալում, ուստի Դիմումատուի մոտ ողջամտորեն ձևավորվել է համոզմունք, որ իրավունք ունի և կարող է պայմանագիրը կից փաստաթղթերով ներկայացնել իրեն, ինչն էլ կատարվել է:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք ընդգծել, որ հրավերով նախատեսված չէ՝ ում պետք է ներկայացվի պայմանագիրը:

Բացի դրանից, Պատվիրատուն ինքը չի հերքում պայմանագիրը ստանալու փաստը, այլ ըստ էության մատնանշում է որոշակի ձևական խնդիրներ, որոնք չեն կարող և չպետք է ազդեն գնման գործընթացին: Փաստացի ստացվում է, որ պայմանագիրը կից փաստաթղթերով ներկայացվել է և Պատվիրատուն այն մուտք է արել իր համակարգ, ուստի այս մասով որևէ խախտում չկա: Այն փաստը, որ պայմանագիրը ներկայացվել է հաստատվում է հենց Պատվիրատուի դիրքորոշմամբ: Ավելին, Պատվիրատուն հակասում է ինքն իրեն, քանի որ մի կողմից 18.04.2022թ ճշտված թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովը նշում է, որ «Լեդս» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտք չի եղել ընտրված մասնակցի կողմից ներկայացվող կից գրությունը, հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագիրը կնքելու համար պահանջվող փաստաթղթերը», և միևնույն ժամանակ, Պատվիրատուն ինքը իր բողոքի պատասխանում հայտնում է, որ «. . . .ԵՊՀ կողմից դրանք ընդունվել էին և «ԼԵԴՍ» ՍՊԸ-ին լրացուցիչ ծանուցվել էր, որ փաստաթղթերը թերի են» (տես՝ բողոքի պատասխանի 2-րդ էջ 3-րդ պարբերություն):

Այսինքն, ունենք երկու իրար հակասող փաստ, որոնք վկայակոչվում են Պատվիրատուի կողմից՝

փաստ 1՝ Պայմանագիրը չի ներկայացվել և մուտք չի եղել համակարգ

փաստ 1-2՝ Պայմանագիրը ներկայացվել է և մուտք է եղել, սակայն այն թերի է եղել:

Ստեղծված իրավիճակում Պատվիրատուն հակասում ինքն իրեն, ընդ որում երկու իրար բացառող հանգամանք հնչեցնելով:

Ավելին, Պատվիրատուն իր առարկությունում վկայակոչում է նաև Հրավերի 1-ին մասի 9.5 կետը, սակայն մեջբերում լրիվ այլ տեքստ (տես՝ առարկության 1-ին էջի 3-րդ պարբերությունը): Մասնավորապես, Armeps համակարգում տեղադրված հրավերի 1-ին մասի 9.5 կետը հետևյալի մասին է. «9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:»

Այսպիսով, պնդում ենք, որ Դիմումատուն լիովին և ամբողջությամբ կատարել է Հրավերի 1-ին մասի 9.5 կետով սահմանված պահանջը և որևէ պայման չի խախտել, ուստի Պատվիրատուի վկայակոչածը անհիմն է և ոչ տեղին:

Ամբողջ նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև հիմք ընդունելով Դիմումատուի ներկայացրած փաստերը և բանավոր առարկությունները պնդում ենք, որ ներկայացված բողոքը հիմնավոր է և խնդրում ենք այն բավարարել:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 18.04.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,

- կատարել 24.03.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումները, այն է՝ «Լեդս» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

3. <u>«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7564-2022 գրությամբ դիմել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լեդս» ՍՊԸ-ի կողմից 28.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 02.05.2022թ.-ին գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը և հայտնել հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2022թ. ապրիլի 28-ի գրությանը («Լեդս» ՍՊԸ-ի ներկայացրած ԲՔԱ-ԼՕ/2/7564-2022 բողոքի վերաբերյալ) հայտնում ենք, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ԵՊՀ Ավտոկայանատեղերում կայանման ավտոմատացման և կառավարման սմարթ համակարգերի տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.03.2022թ. հայտարարված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (ԳՀԸ) հայտ էր ներկայացրել թվով 3 մասնակից, այդ թվում՝ «Լեդս» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 24.03.2022թ-ին «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով ԳՀԸ հրավերի 8-րդ կետով սահմանված կարգով կայացրել էր որոշում և ըստ չափաբաժինների, մասնավորապես 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Լեդս» ՍՊԸ-ին ճանաչել էր 1-ին տեղ զբաղեցրած, ընտրված մասնակից և սույն հրավերի 1-ին մասի 9.2 կետի համաձայն անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով Պատվիրատուն ծանուցել էր ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը և հիշեցում, (համաձայն մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջի) նմանատիպ

աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին:

«Լեդս» ՍՊԸ-ն, սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետի համաձայն, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է գրավոր Պատվիրատուին ներկայացներ իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերում տեխնիկական բնութագրով նախատեսված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր: Սույն պահանջի մասին ընկերությունը տեղեկացված է եղել ինչպես մրցույթի հայտարարություն-հրավերով, այնպես էլ պայմանագիր կնքելու մասին ծանուցագրով (ծանուցագիրը կցվում է):

Այն փաստը, որ «Լեդս» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, ենթադրում է, որ նա ծանոթացել և ընդունել է հրավերի տեխնիկական պահանջները:

«Լեդս» ՍՊԸ-ն ներկայացուցիչը իր կողմից կնքված պայմանագիրը, առանց ծանուցմամբ պահանջված մնացած փաստաթղթերի, ուղղակի ներկայացրել է ԵՊՀ ռեկտորատի գործավարներից մեկին և գործավարի հիշեցմանը, որ տվյալ փաստաթուղթը հանդիսանում է գնումներին վերաբերող փաստաթուղթ և այն անհրաժեշտ է ներկայացնել ԵՊՀ Գնումների վարչություն կամ ընդհանուր բաժին, տրվել է պատասխան, որ դա ուղղակի փաստաթուղթ է, որն անհրաժեշտ է ԵՊՀ պրոռեկտորին:

Հայտնում եմ Ձեզ, որ ռեկտորատի գործավարը (նրա հրամանը կցվում է) ԵՊՀ մուտքագրվող փաստաթղթերի գրանցման, հաշվառման, դրանց՝ ԵՊՀ կողմից ստացված լինելը հաստատելու իրավասություն չունի: Այդ գործառույթներն իրականացնում է ԵՊՀ Ընդհանուր բաժինը, որը ԵՊՀ փաստաթղթաշրջանառությանը ներկայացված յուրաքանչյուր փաստաթուղթ համարակալում է և նշում է ստացման ամսաթիվը:

Այնուամենայնիվ գործավարի կողմից ստացված փաստաթղթերը փոխանցվել են ԵՊՀ Գնումների վարչությանը և տրամադրվել են հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը ստանալով միայն պայմանագիրը հայտնել է «Լեդս» ՍՊԸ տնօրենին, որ պայմանագրի հաշվառման համար անհրաժեշտ է ներկայացնել նաև նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր: «Լեդս» ՍՊԸ տնօրենի բանավոր հավաստմամբ վերջիներս դրանք պետք է ներկայացնեին մինչև 14.04.2022թ. (պայմանագրի ներկայացման վերջնաժամկետի ավարտը), սակայն այդ ընթացքում որևէ փաստաթուղթ «Լեդս» ՍՊԸ կողմից ոչ միայն ԵՊՀ չի ներկայացվել, այլև չի ներկայացվել նույնիսկ ռեկտորատի գործավարին:

Անկախ այն հանգամանքից, որ «Լեդս» ՍՊԸ պայմանագիրը ԵՊՀ փաստաթղթաշրջանառությունում չէր գրանցվել պատշաճ կերպով, ԵՊՀ կողմից դրանք ընդունվել էին և «Լեդս» ՍՊԸ –ին լրացուցիչ ծանուցվել էր, որ փաստաթղթերը թերի են: Սակայն այդ թերությունը չէր շտկվել: Այսինքն «Լեդս» ՍՊԸ-ն խախտել էր սույն հրավերի 9.5 կետով սահմանված պահանջը և Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ, սահմանված ժամկետում (01.04-14.04.2022թ-ը), չէր ներմուծել վերը նշված փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լեդս» ՍՊԸ մի քանի անգամ ծանուցված է եղել, որ անհրաժեշտ է ներկայացնել նաև նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր, նրա աշխատակիցները չեն կատարել այդ պահանջը: Մրցույթի հայտարարությունը ստանալուց հետո՝ պարզաբանումներ պահանջելու փուլում, չեն ներկայացրել հարցում այդ կապակցությամբ, ընդունել են մրցույթի պայմանները, կազմել ու ներկայացրել են համապատասխան հայտ, ընդունել են պայմանագիր կնքելու մասին հրավերը, սակայն կնքված պայմանագրի հետ միասին չեն ներկայացրել այդ նույն մրցույթի հրավերով պահանջված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր: Այդ պատճառով ներկայացված պայմանագիրը համարվել է թերի, չի հաշվառվել ԵՊՀ կողմից և «Լեդս» ՍՊԸ հետ չի կնքվել պայմանագիր:

Ձեր կողմից ներկայացրած փաստաթղթերից հայտնի դարձավ նաև այն փաստը, որ «Լեդս» ՍՊԸ ստեղծվել է մրցույթը հրապարակվելուց ընդամենը 34 օր առաջ, ինչն էլ, մեր կարծիքով, կարող էր լինել նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր չներկայացնելու պատճառը:

18.04.2022թ-ին Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով սույն հրավերի 1-ին մասի 8.20 կետը սահմանված կարգով իրականացրել է իր գործառույթները՝ կայացրել է արձանագրություն 3-ում շարադրված որոշումները:

Հարգելի պարոն Օհանյան, ամփոփելով վերը շարադրվածը, խնդրում ենք անհիմն ճանաչել «Լեդս» ՍՊԸ-ի բողոքը և համաձայն Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի հանել «ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնման ընթացակարգի կասեցումը:»:

Պատվիրատուն 12.05.2022թ.-ին ներկայցրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Հայցում ենք Ձեր ներողամտությունը, որ չկարողացանք ներկա գտնվել մայիսի 4-ին կայացած «Լեդս» ՍՊԸ-ի ներկայացրած ԲՔԱ-ԼՕ/2/7564-2022 բողոքի քննության նիստին: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (ԵՊՀ) շատ մեծ կազմակերպություն է և Գնումների վարչությունը աշխատում է գերծանրաբեռնված:

Դիտեցինք նիստի նկարահանումը և, որպեսզի ապացուցենք, որ մեր «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի համակարգողը երկու անգամ զանգահարել է «Լեդս» ՍՊԸ տնօրեն Տարոն Թարզյանին և բացատրել է, որ նրանց կողմից բերված պայմանագրերը թերի են (պատշաճ կերպով (սահմանված ժամկետում, համապատասխան մուտքի համարով և ամսաթվով) չեն մուտքագրվել Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում և բացակայում են ընթացակարգի հրավերում տեխնիկական բնութագրով նախատեսված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթերը), դիմել ենք «Վիվա-MSU» բջջային կապի օպերատորին ու ստացել ենք մրցույթի համակարգողի զանգերի քաղվածք՝ 11.04 – 16.04.2022թ-ի համար:

Քաղվածքը ներկայացնում եմ կից և հրավիրում եմ Ձեր ուշադրությունը դեղին գույնով ընդգծված տողերին, որոնք հաստատում են, որ 12.04.2022թ-ին մեր համակարգողը (հեռ. համար՝ 094437067) երկու անգամ զանգահարել է «Լեդս» ՍՊԸ տնօրեն Տարոն Թարզյանին (հեռ. համար՝ 37477432321): Անհրաժեշտության դեպքում կարող ենք դիմել պատկան օրգաններին և խնդրել հեռախոսազանգերի ձայնագրությունները:»

Պատվիրատուն 13.05.2022թ.-ին ներկայացրած մեկ այլ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ծանոթացանք «Լեդս» ՍՊԸ տնօրեն Տ. Թարզյանի ներկայացուցիչ Մ. Եսայանի կողմից Ձեզ, ԲՔԱ-ԼՕ/2/7564-2022 բողոքի վերաբերյալ, լրացուցիչ ներկայացրած հիմնավորումներին:

Մեզ մոտ այնպիսի տպավորություն է առաջանում, որ «Լեդս» ՍՊԸ-ն ուղղակի խճճվել է իր անհիմն «փաստարկներում» և կրկին փորձել է շրջանցել «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հստակ պահանջները ու դրանք բնութագրում է որպես «ձևական խնդիրներ»: Անկախ ամեն ինչից և Ձեր կողմից կայացվելիք որոշումից. «Լեդս» ՍՊԸ-ն պետք է ներկայացնի հրավերի տեխնիկական բնութագրերի պահանջներով սահմանված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր: Նրանց կողմից Ձեզ լրացուցիչ ներկայացրած հիմնավորումներում ամենակարևորը դա պետք է լիներ:

Կրկնում ենք, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.03.2022թ-ին «ԵՊՀ-ԳՀԾՁԲ- 22/84» ծածկագրով ԳՀԸ հրավերի 8-րդ կետով սահմանված կարգով կայացրել էր որոշում և ըստ չափաբաժինների, մասնավորապես 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Լեդս» ՍՊԸ-ին ճանաչել էր 1-ին տեղ զբաղեցրած, ընտրված մասնակից և սույն հրավերի 1-ին մասի 9.2 կետի համաձայն

անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով Պատվիրատուն ծանուցել էր ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը և հիշեցում, (համաձայն մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջի) նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին:

«Լեդս» ՍՊԸ-ն, սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետի համաձայն, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է գրավոր Պատվիրատուին ներկայացներ իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերում տեխնիկական բնութագրով նախատեսված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթեր: Սույն պահանջի մասին ընկերությունը տեղեկացված է եղել ինչպես մրցույթի հայտարարություն-հրավերով, այնպես էլ պայմանագիր կնքելու մասին ծանուցագրով (ծանուցագիրը կցվում է):

Այն փաստը, որ «Լեդս» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, ենթադրում է, որ նա ծանոթացել և ընդունել է հրավերի տեխնիկական պահանջները:

Որպեսզի ապացուցենք, որ «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի համակարգողը, լրացուցիչ, երկու անգամ զանգահարել է «Լեդս» ՍՊԸ տնօրեն Տարոն Թարզյանին (բանավոր է տեղեկացրել առկա թերությունների մասին, քանի որ նրանց կողմից ներկայացված փաստաթղթերը մուտք չեն արվել ԵՊՀ փաստաթղթաշրջանառություն) և բացատրել է, որ նրանց կողմից բերված պայմանագրերը թերի են (պատշաճ կերպով (սահմանված ժամկետում, համապատասխան մուտքի համարով և ամսաթվով) չեն մուտքագրվել Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ և բացակայում են ընթացակարգի հրավերում տեխնիկական բնութագրով նախատեսված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթերը), դիմել ենք «Վիվա-ՄՏՍ» բջջային կապի օպերատորին ու ստացել ենք մրցույթի համակարգողի զանգերի քաղվածք 11.04 – 16.04.2022թ-ի համար:

Քաղվածքը ներկայացնում ենք կից և հրավիրում ենք Ձեր ուշադրությունը դեղին գույնով ընդգծված տողերին, որոնք հաստատում են, որ 12.04.2022թ-ին մեր համակարգողը (հեռ. համար 094437067) երկու անգամ զանգահարել է «Լեդս» ՍՊԸ տնօրեն Տարոն Թարզյանին (հեռ. համար 37477432321): Անհրաժեշտության դեպքում կարող ենք դիմել պատկան օրգաններին և խնդրել հեռախոսազանգերի ձայնագրությունները:

18.04.2022թ-ին Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.20 կետը, սահմանված կարգով, իրականացրել է իր գործառույթները և կայացրել է արձանագրություն 3-ում շարադրված որոշումները (ներկայացվում է գրությանը կից):»

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ կողմից ավտոկայանատեղերում կայանման ավտոմատացման և կառավարման սմարթ համակարգերի տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.03.2022թ.-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լեդս» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետի համաձայն՝ «Լեդս» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

iv. www.gnumner.am կայքում 25.03.2022թ.-ին հրապարակվել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանվել է անգործության ժամկետ՝ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

v. Պատվիրատուն 31.03.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի ttarzyan05@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացրել միայն «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

vi. Հանձնաժողովի 18.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լեդս» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտք չի եղել ընտրված մասնակցի կողմից ներկայացվող կից գրությունը, հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագիրը կնքելու համար պահանջվող փաստթղթերը:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը և գնման ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետը, որոշել է «Լեդս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած և 2-րդ տեղ զբաղեցնող «Լաքիտերմինալ» ՍՊԸ-ին՝ ճանաչել ընտրված մասնակից:

viii. Պատվիրատուն 02.05.2022թ.-ին, 12.05.2022թ.-ին և 13.05.2022թ.-ին ներկայացված գրություններով ընդունել է Ընկերության կողմից կնքված պայմանագրի օրինակները ստանալու և այն ԵՊՀ գնումների վարչությանը ներկայացնելու վերաբերյալ փաստական հանգամանքը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Լեդս» ՍՊԸ-ի կողմից 28.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10

աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես

նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ կողմից ավտոկայանատեղերում կայանման ավտոմատացման և կառավարման սմարթ համակարգերի տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.03.2022թ.-ին հայտարարված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետով «Լեդս» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչով պայմանավորված www.gnumner.am կայքում 25.03.2022թ.-ին հրապարակվել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանվել է անգործության ժամկետ՝ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Պատվիրատուն 31.03.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի ttarzyan05@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացրել միայն «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Հանձնաժողովի 18.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Լեդս» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում Պատվրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտք չի եղել ընտրված մասնակցի կողմից ներկայացվող կից գրությունը, հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագիրը կնքելու համար պահանջվող փաստթղթերը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Լեդս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած և 2-րդ տեղ զբաղեցնող «Լաքիտերմինալ» ՍՊԸ-ին՝ ճանաչել ընտրված մասնակից: Սակայն Պատվիրատուն 02.05.2022թ.-ին, 12.05.2022թ.-ին և 13.05.2022թ.-ին ներկայացված գրություններով ընդունել է Ընկերության կողմից կնքված պայմանագրի օրինակները ստանալու և այն ԵՊՀ գնումների վարչությանը ներկայացնելու վերաբերյալ փաստական հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, համադրելով Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքները Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 24.03.2022թ.-ի նիստի թիվ 2 և 18.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունները, 31.03.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ուղարկված ծանուցումը և

Պատվիրատուի կողմից գրություններով ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն դեպքում, «Լեդս» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 31.03.2022թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուին է ներկայացրել կնքված պայմանագիրը:

Ընդ որում, հարկ է նկատել, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը 18.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրել է «Լեդս» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժել մասին որոշում, այն դեպքում, երբ 02.05.2022թ.-ին, 12.05.2022թ.-ին և 13.05.2022թ.-ին ներկայացված գրություններով Պատվիրատուն հավաստել է, որ մինչև 14.05.2022թ.-ը, ԵՊՀ գնումների վարչությունը ստացել է «Լեդս» ՍՊԸ-ի կողմից ստորագրված և կնքված պայմանագրերը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լեդս» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուին է ներկայացրել կնքված պայմանագիրը, որպիսի պայմաններում «Լեդս» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Լեդս» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ՝ ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը, ինչով պայմանավորված Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակիորեն:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված՝ 24.03.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ որոշումները կատարելուն, այն է՝ «Լեդս» ՍՊԸ-ի հետ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստի հաշվառմամբ, որ «Լեդս» ՍՊԸ-ի հետ կարող է կնքվել պայմանագիր միայն այն դեպքում, երբ Ընկերությունը՝

Պատվիրատուի կողմից ներկայացված նոր ծանուցման արդյունքում օրենսդրության սահմանված ժամկետում և կարգով կներկայացնի կնքված պայմանագիրն ու հրավերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, որի ամբողջական ու լիարժեք ուսումնասիրությունը, սույն պարագայում, պետք է իրականացնի Պատվիրատուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լեդս» ՍՊԸ-ի կողմից 28.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/75 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-22/84» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Լեդս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:
2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**